

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՀԱՂԲԱՏԻ ԴՊՐՈՑԻ ՄԻ ԳԼՈՒԽ ԳՈՐԾՈՑ

(ԳԵՏԱՇԵՆԻ ԱԽԵՏԱՐԱՆԸ)



Հաղբատը մէկն է Հայոց ամենանշանաւոր վանքերից և հոգեւոր կեղրոններից. ծագմամբ ունինք շատ աւելի հնագոյն վանքեր, բայց քչերը դրանցից կատարել են այնպիսի երկարատև և կարեւոր զեր, ինչպէս Հաղբատն է: Նա նշանաւոր է նախիրքեւ ճարտարապետական արուեստի միթանդարան իւր բազմազան չէնքերով, արձանագրութիւններով, փիզուրատիւ և զարդերի քանդակներով. նշանաւոր է իրքեւ հոգեւոր կեղրոն իւր արքեպիսկոպոսութեամբ, որ ժի. զարից կարեւոր զեր է կատարել մեր եկեղեցական պատմութեան մէջ, յատկապէս մինչեւ ժի. դարի վերջերը: Բայց ոչ պակաս նշանաւոր է նաև իրքեւ մատենագրութեան և զրչութեան արուեստի գլխաւոր կեղրոն արեւելեան Հայաստանի մէջ: Մատաղիր չլինելով այստեղ տալ նորակատարած զերի լրիւ պատկերը, առաջական միայն այդ զպրոցի մի զրուխ գործոցի՝ «Դիտաշէնի աւետարանի» ուսումնականիւ մատարանիւ (\*):

Ա.

Աւետարանը մեծագիր է, կազմը  $30 \times 23$  սմ. մեծութեամբ, կաշեպատ տախտակով, առաջին երեսի զարդարանքը արծաթի բեւեռներով քառանկիւնու մէջ՝ նման քենուներից կաղմուած մի խաչ մէջտեղում. թեւերի ծայրերը երեք երեք բեւեռներով: Միւս երեսի զարդարանքն ընկած է:

Նիւրը՝ հաստ մագաղաթ հորթի կաշուց՝  $30 \times 22$  սմ. մեծութեամբ:

Գիրը՝ բոլորաձեւ, միջին երկաթաղիր, երկսիւն,  $21 \times 6^{1/2}$  սմ., ներքեւի տնահամարներն էլ հետք. տնահամարները փոյքերագրով, ինչպէս և զրչի ձեռքով կա-

(\*) Բերուած է մեր ձեռքով, այժմ էջմիաձնի մատենագրանում:

տարուած սրբազրութիւններն ու լրացումները: Տողերը մի զծով, սրոնց վերայ դէպի վեր չարուած են տառերը. տնահամարների գծերը աւելի նեղ: Գրերն ընդհանուր առմամբ բոլորաձեւ լինելով՝ մի քանի տառերի գծից ցած վերջաւորութիւնները քիչ սրածայր են՝ փ. ք. հ. բառերի մէջ, իսկ միւսներից՝ բ. գ. ի. խ. կ. պ. տների սկզբում իրքեւ զլխատառերը: Մանրանկարչական տառերով են սկսում միծ հատուածները, հազուազիւտ դէպբում զլխատառին կցուած է մի արմաւենիկի զարդ, դէպի լուսանցքն ուղղուած, որ, հաւանօրէն, նկարիչն է աւելացրել և ոչ զրութեան հետ նկարուած: Ուկի քիչ է գործազրուած բնագրի մէջ. հատուածների առաջին սողը, երբեմն, կամ առաջին միծ տառը սոկւով, գործազրուածն էլ փոշուկի է, այժմ արդէն փայլը կորցրած: Ուկու փոխարէն միծ հատուածի առաջին տաղում զործազրուած է պարզ կարմիրը, բայց երեմն և սոկու փոշով ծածկուած:

Գրիչն է Յակովը, իսկ սրբազրողը կամ ուղղողը Մխիթար Քոյրայրեցի (Զում Քոյրացի, 61 ա.), որ լրացումներ ունի բոլորգրով, բառեր կամ փոքրիկ բաց թողած նախադասութիւններ: Գրչութեան ևլլը Հաղբատն է և մանանկը 1211 թ.: Նկարիչն է Մարգարէ և կազմուած է Հոռոմոսի վանքում «Հրամանաւ հաւը Մխիթարայ»: Սացողն է Մահակ կրաւնաւոր և յետին քահանայ՝ «աշակերտ սր. ուխտիս Հաղբատայ աղքաւ և տոհմիւ ի միծ մայրաքաղաքէն յԱնուոյ»:

Բ.

Զեռագիրը բազմաթիւ յիշատակարաններ ունի, որ մէջ ենք բերում իրեւ նիւթ Զեռագրի ծագման և պատմութեան համար, դասաւորելով ժամանակագրական

կարգով, ըստ հնաբաւորութեան եւ ան-  
թռւականները:

1. 348 ա. Ածեղն եւ լուսաւոր մա-  
տենագրութիւն չորից աւետարանչաց հա-  
մարարբառ եւ զուգապէս միաւորութք, ,  
զոր նկարագրեցին վս. տնաւրէնութեան  
բանին այ., ըստ քառահոլով վտակացն  
աղինա աղերերաբար գետահետեալ, ոռողե-  
լով զանգաստանս մտաց հաւատացելոց ի  
քս., որով հատարութ և բովանդակապէս, ,  
որքան կամ եղեւ հոգւոյն սրբոյ զամենայն  
խորհուրդ, զծածուկոն եւ զյայտնիսն ար-  
ձանացուցին, տալով եկեղեցւոյ աւանդ  
ածատուր զբարձրագոյնան եւ զիստնարհան  
տընաւրինաբար խառնմամբ, զոր ընկալ-  
եալ ի վերուստ յայտնութենէն զրեցին ա-  
ռանձնապէս եւ զուգաբարբառ, որպէս զի  
յանցնիւրսն ժամանակ անթերի եւ անփազ  
բազմապատիկ եւ զանազան երախտեցն  
այ. լիցի առ մեկ յիշատակ մինչ ի վախ-  
ճան:

Որում այսպիսւոյ յոքնապատիկ բար-  
եաց բաղձացող եղեալ իմ ամենանուաս-  
տի եւ տրուպ սպասաւորի տան այ. Սա-  
հակ կրաւնաւորի (\*) / եւ յետին քահա-  
նայի, որ էի աշակերտ սր. ուխտիս Հաղ-  
բատայ ազգաւ եւ տոհմիւ ի մեծ մայրա-  
քաղաքէն յԱնւոյ, սնեալ ի սրբարան ուխ-  
տիս ի Հաղբատ, ստացայ զսր. աւետա-  
րանս իմովք արդիամբք առ ի յիշատակ  
տպագայից ինձ նուաստիս Սահակայ եւ  
ծնողացն իմոց Ռովմանոսին եւ կատային՝  
եւ երկուց հարազատ եղբարցն իմոց իպա-  
տոսին եւ Առաքելին, եւ իւրեանցն զաւա-  
կաց, եւ քերցն իմոց եւ զաւակացն նո-  
ցուն, եւ ազգայնւոցն ամենից կենդանեաց  
եւ մեռելոց: Եւ ետու զծազել զսա եւ  
կազմել ներքոյ եւ արտաքոյ յաւրինուա-  
ծով ըստ իմում կարի, մեծաւ յուսով եւ  
կատարեալ սիրով: Որ և աղերսական մաղ-  
թանաւք հայցիմ ի սիրոզաց այ., որք  
ժամանգորդք էք սրբոյ եկեղեցւոյ և սպա-  
սաւորք տրունեան խորհրդոյն, յորժամ  
առնուք զսա ի ձեռս ձեր, զիս զՄահակ

ստացող սորա, եւ զվերոզրեալ ծնաւզն  
իմ եւ զեղբայրսն՝ եւ զՄարգիս հոգեւոր  
ծնողն իմ: զՅակովբոսն եւ զՎարդն: Որ-  
պէս զի ձերոյին սր. աղաւթիւքք արժա-  
նացուք հանդիպել ի դէպ ժամանակի  
հանդերձելոցն բարեաց (\*) / պատրաստեա 351 ա-  
լոցն ի քս. սիրելեաց անուանն իւրոյ:

Եւ արդ զրեցաւ սա եւ ծաղկեալ կաղ-  
մեցաւ յամի յորում էր թիւ համարոյն  
թռւականութեանս Հայոց հարիւրոց վեցից  
և նոյնքանեաց տասանց: Խսկ նորոյ շըր-  
ջանի միոյ հարիւրոց քստն եւ ութեակ  
թութվ: Ի սր. ուխտիս Հաղբատայ զծազրե-  
ցաւ ձեռամբ Յակովբայ յառաջնորդութեան  
տն. Յոհաննիսի սրբասիրի, ի թագաւո-  
րութեանն Հայոց արեմտայինն կողման  
կառնի քստութեան Զաքարիայ շահնշահի, յորոց  
յաւուրս ժամանակաց յոլովս կատարեաց  
ած. յաղթութիւն ի բազում տեղիս, զորմէ  
այլք պատմեսցն զայլ ինչ. եւ մեզ վասն զի  
խնդիր է առ սրբութիւնդ ձեր մատուցա-  
նել մաղթանս ոգեհեծ պաղատանաւք, ովք  
լուսերամ բնակիչչք սրբոյ ուխտիդ Ար-  
ջուառնի, առ որ զյոյս հաւատոյ մեր  
եղեալ զրովանդակ գոյք ծնողաց մերոց և  
եղբարց ծախեցաք և շինեցաք զածարնակ  
սր. եկեղեցիքս, և աւանդեցաք զսր. ա-  
ւետարանս յայ. սր. եկեղեցիքս, որ շի-  
նեցաւ ի մէնջ ի վանս Առջուառնի: Որպէս  
զի սր. եկեղեցեաւս և սր. աւետարանաւս  
մեք եւ ծնաւզքն մեր, եւ եղբարք եւ  
աղպականք գտցուք / ողորմութիւն ի քէ. 351  
այ. մերոյ ի մեծ եւ ի սոսկալի աւուրն  
դատաստանի: Եւ որք յիշէք զմեզ բարե-  
մտաբար, գտէլիք եւ զուք ողորմութիւն  
յամենեցունց արարչէն, որ է աւրհնեալ  
յաւիտեանս ամէն:

Հրամանաւ հաւը Միսիթարայ կաղմե-  
ցաւ ի վանքս Հոռոմոսի օրոյ ողորմեսցի  
քս. ած.:

Զկազմող սորին զՄարահամ և զնկարիչ  
սորին զՄարգարէն և զողորմութեան խըն-  
գրող զՅովք. յիշեսչիք յաղաւթս վս. տն.  
աղաչեմք:

(\*) Յիշատակարանի մէջ, ներկայ կաղմի ժա-  
մանակ մտած է երկութագրին մօտ արևելեան բոլոր-  
գրով, իսկ այնուհետեւ մինչեւ վերջը բոլորգրով,  
բայց ոչ կիլիկան:

2. 111 թ. Մատթէոսի վերջում, ուղղանկիւն երկաթագրով.

Սր. առաքեալ և աւետարանիչ բանին հաւը, ի քոյդ ապաւիննեալ բարիխուսութի. աղքատու և մեղաւոր արեղայս Մարգարէս նկարով սորին, որպէս զի սղորմեացիս ինձ, նաեւ Սահակայ ստացողի, եւ եղբաւը իւրում իպատոսին, որ կիսաւրեա եւ յաշխարհէս: Ով զմեզ աղաւթիւք յիշէ, ած, զինքն յիշէ:

3. 111 թ. Նոյն գրով և թանաքով.

Տր. ած. ողորմեա Սարգսի կուսակրաւն քահանայի և եղբաւը իւրում Շահերայն և ծնաւղաց իւրեանց ամէն:

4. 173 թ. Մեծ երկաթագրով:

Յակովը զրիչ յիշեցէք ի տր.:

5. 173 թ. Մարկոսի վերջում նոյն Մարգարէի ձեռքով.

Տր. ած. ողորմեա Սահակայ ստացողի և ծնաւղաց իւրոց եւ եղբարց, եւ արայ զնոսա հաղորդս քո սրբոցն պսակի: ամէն:

6. 267 թ. Ղուկասի վերջում նոյն Մարգարէի ձեռքով.

Յիշեա քս. ած. յողորմութե. քում զՍահակ ստացող սր. աւետարանիս, եւ զծնաւղոն իւր զեղբայրոն և զքոյրոն զիւլմանոսն և զկատայն, զիպատօսն և զԱռաքեալն, զԶարհայն և զՀոռոմմտիկին, և արայ զնոսա քո սրբոցն դասակից և պնակակից: ամէն:

Նա(եւ) զՎարդն եւ զՅակովբասն եւ զծնաւղոն նոցա եւ զամհայն ընդունիսն:

7. 347 թ. Յովհաննու վերջում, բուն զրչի ձեռքով, բնազրի զրով և թանաքով:

Փառք բոլորից հաստի համապատիւսուր երրորդութեանն յաւիտեանս:

Աւրհնութի. որ կարդա  
գովութի. որ լսէ  
փառք չնորհաւղին  
եւ յիշատակ զրչիս:

Տր. ած. ամենակալ նորոգեա իկեանս անձերանալիս զՍահակ ստացաւղ սր. աւետարանիս ԱՆԵՒ: Ամէն,

Բացի այս իսկական յիշատակարաններից կան և փոքրիկ նկատողութիւններ խորանների զերանների վերայ կամ բնազրի լուսանցքներում, որոնք ձեռագրի ծագ-

ման պատմութեան համար նշանակութիւն ունին:

8. 10 ա. Խորանի վերին, կապոյտ շըրջանակի վերայ սպիտակ զեղագիր երկաթագրով:

... (Տր.) Ած. ողորմեա Առաքել... (ին ամ) էն

Նոյն խորանի սիւներին ձգուած կապոյտ գերանի վերայ, ոսկեղոյն զրով.

Հոգի ած. գթայ ի հոգին իպատոսին ծառայի քո ամէն:

— Նոյն խորանի յատակ կազմող կարմիր գերանի վերայ, ոսկեղոյն զրով.

Հոգի ած. գթայ ի հոգին իպատոսին ծառա....:

9. 11 ա. Խորանի ճակատի կապոյտ շըանակի վերայ.

Տր. յս. ողորմեա Սահակա ամէն:

Սիւների գլխի կապոյտ գերանի վերայ.

Ած. իմ յս. ողորմեա մեղուցեալ ողոյս ամէն:

10. 15 ա. Խորանագարդի տակը ներքելի լուսանցքում, փոքր երկաթագրով.

Տր. ած. ողորմեա Մարգարէին, զրչի և նկարչի և Սահակա ստացողի, և ծնաւղաց իւրեանց, ամէն:

11. 175 ա. Ղուկասի սկզբնազարդի լուսանցքում խոշոր, կարմրագեղ ծաղկագրով, (պատկեր 7).

Սահակայ է զիրքս ի փրկութի..

Սրանք են այն յիշատակարանները, որոնք կապուած են Զեռագրի ծաղման հետ:

Դք.

Բայց աւելորդ չենք համարում մէջ բերել և այն յիշատակարանները, որոնք Զեռագրի յետազայ պատմութեանն են վերաբերում.

12. 349 ա. Խոշոր բոլորդիր, միջին երկաթագրի մեծութեամբ.

Սիրոյ զաւրութիւն զերազանց է քան զրութիւն և բարեխօրհ արանց անյազապէս առ ի բարին զնթացո(?) որ առ ած., մանաւանդ առ որ ածայինն զաւրանայ զիտութիւն և բաց և սրահաց ունի զհոգոյն

տեսութիւն։ արհամարհելով զանցաւոր եւ զապականացու կենսո, որպէս աստանաւը տեսաք, յորս ածայնոյն դատու բարոյն տեսութիւն տառանց զանգաղանաց, որպէս սիրեցեալս յայ. եւ յածայնոց Սարգիս քահանայ, սնեալ սրբութեամբ ի մէջ եկե-

349 թ. զիցոյ և զարգացեալ ի մէջ իմաստ / (ռն) (\*) և հոգեոր արանց ըստացաւ զկենսաբեր աւետարանս, զոր քառայոլով վտակաւքն արբուցանէ զտիեզերս, զանձ անպակաս յերկինս և յիշատակ յափտենից ըստ գրեցելումն, թէ երանի որ ունիցի զաւակ ի Սիոն և Ընտանիք իցեն նորաց յեմ. :

Արդ երանելիս Սարգիս իբրև զիմաստուն վաճառական ի խնզիր եղեալ պատահան մարգարտին և գտեալ զսա ի գաւառին Անոյ մեծայցախ, ոսկեզիր եւ ոսկեճաճանչ ծաղկաւք զարդարեալ, ըստացաւ զսա ի հաւալ (Ըն)չից (\*) իւրոց ի բա-

350 թ. բիխայ / աւս հոգոյ իւր առ քս. և յիշատակ (ակ յաւ) յիտենական (\*\*), ծնաւզաց իւրոց իւ (Ըն)ձայեաց (\*\*) զսա Մեծ կողմանց հպիսկոպոսարանիս, որ է իւր տեղի սնընդեան։ Եւ ի տարօնն։ Բ։ աւր ժամ նմայ յիշատակ կատարեն սրբոյն Սորբով աււենին. որ խափանէ, նորա ազգի յանցանացն պարտական եղիցի. և որ զայս աւետարանս ի յեպիսկոպոսարանէս հանել ջանայ ի յառաջնորդաց և կամ յիշխանաց, հանել եղիցի նա յարքայութենէն այ., եւ սրոշեալ հոգով և մարմեով ի սր. երօրդութենէն եւ նզովեալ եղիցի։ Յժ. Հայրա-

350 թ. պետէն։ Բնձայեցաւ կենսայ / (թէ)ր աւետարանս սուրբ Գրիգորիս։ Ի թուականութեանս։ ՈՀՅ. ի յիշխանութեանս հզարին Հասանայ որդոյ Վախտանգայ, և հայրապետութեանս ան. Յոհաննիսի։ Արդ որք ընթեռնոյք և լուսաւորէք կամ զաղափար առնոյք, զՄարգիս և զՄիսիթար որ զնեաց և երեր զաւետարանս, յիշեցէք ի սրբափալլ և ընդունակ յաղաւթօն ձեր, եւ (\*\*\*), քս. ած. յիշաւզացդ և մեզ յիշեցելոցդ ողորմեցի յիւրում զալլստեան եւ յապագայի տուրին ամէն։

(\*) Փացած են եւ չեն կարգացւում փակագի մէջ առնուածները, լրացնում ենք։

(\*\*) Կտրուած է մերթի ձայըը, լրացնում ենք։

(\*\*\*) Այսուղից մինչեւ պարբերութեան վիրէլ նոյն թանաքով եւ հաւանորէն նոյն գրչի ձեռք, երկաթազիր է։

Զսակաւ աշխատողս յիշեցէք ի տր. աղաչեմ։

13. 351 թ. Տարբեր զրիչ, բոլորզրով.

Կամաւ ամենակալին այ. ես տր. Վանական գտի հնացել և աւերել զսր. աւետարանս և ետու վերստին նորողել ի յիշատակ հոգոյ իմոյ և ծնողաց իմոյ և եղբարց, զի որք հանդիպիք կամ ընթեռնուք մեղաց մերոց թողութիւ. հայցեցէք ի քէ. որ է աւրհնել յափտեանս ամէն։

(Մէկ ու կէս տող բաց և ապա զարձեալ նոյն զրով) եւ զիս զբազմամեղ կազմիչ զՄտեփաննոս սուտանուն քահանա յաղաւթս յիշեցէք։

14. 174 թ. ԶՄաղմոսիկ քհյն. և զիւր

աւագ որդին Մուսայէլ. և զՄաղմաղիէն և զմայրն մեր Փոլ խաթուն և զհորսն իւր Հառմամիմայն և զիւր ամ. արեան մերձաւորսն յիշեցէք ի քս. եւ ած. զձեզ յիշէ իւր միւսանզամ զայլստեանն ամէն. եւ զեռայրուսիկ սարկուագն մեր Պէկնիէն։

15. 112 ա. Մատթէոսի վերջում, բոլորզիր.

Ես անարժան ծառայս այ. Մովսէս քահ. յիտոյ կաղմեցի եւ նորողեցի յիշատակ հոգոյ իմոյ, և մարմնոյս իմոյ և ամ. արեան մերձաւորաց իմոյ որ ի քս. են հանգուցեալ, տղաչեմք զձեզ ով դասք լոււսիրամից, յորժամ հանզիպիք յայսմ որ. աւետարանիս, յիշեցէք զիս զՄովսէս քհ. և զմայրն իմ զՏիկին, զեղբայրն իմ զՏօնիկ և զաւակին իմոյ Վարդանայ և զմայր սորին զՇահրիկ։

Եերես անկեալ աղաչեմ զձեզ, ով դասք լոււսերամից և մանկունք եկեղեցւոյ, յորժամ կարգայք կամ օրինակելով զանայք, յիշեցէք զիս զՄովսէս քահայս. և ած. որ առատ է ի տուրս բարիս, պարզեեսցէ ձեզ յիշողացդ և մեզ յիշեցելոցս առ հասարակ ողորմեցիւ։ Ի թիւ. որ կազմնցաւ սր. աւետարանս ձեռամբ անարժան ծառայս այ. Սարգսիս յիշեցէք ի քս.։ Պիթն. Էր մէհեկի տմախ իԶ-ն էր որ կազմեցաւ։ Որ է սր. աւետարանս Մեծակողմանց Խաչինոյ եպիսկոպոսարանէն մայրաքաղաքէն իշխանութ. պարսն Զալալին եպութիւ. տր. Գրիգորին Գեռաքարեցին։ Ով որ կտրելով

ջանայ կամ հանելով ի հայրանական (?!)  
տթոռոյն, նոյնպէս ինքն ի քաէ. կտրեալ  
և հեռացեալ ամէն:

16. 111 թ. Շեղազրին մօտ բոլորովով.  
Յանուն յայ. (?!)-ի և Ովանէս ու կո-  
ղայից իմ Թանգուղ տվինք մեր աւժա-  
րուր, զմեր որդիս Մարդարէ հողոյ որդի  
Մովկէս (?!)-քէի. մինչև մահն որ երէց ամէն  
վկայուր. Արուկանայ Ալֆիկայ որդոյ, Բե-  
կիկայ Խոչոտայ Լարեցի. զինչ մդ. որ դայս  
բանս խարանէ: Յժմ: հյ. կապ. ի թզ.  
Պ.Զ.:

Ես Խաչայտուր երէցս վկայ, որ զգիրս  
զրեցի:

17. 111 թ. Անգարժ շեղազրով.  
Յանուն այ. ևս Արթուրովա Մայլիքայ  
որդի միաբանեցայ սր. աւետարանիս ու  
տուր զիմ աղջիկս զկսան Մուսէս իրիցոյ,  
ով խարանէ զատի այ. ով կարդէք լի բե-  
րանով ասացէք, ած. ողորմի Մալիքայ  
ամէն. զԱրութէն պահեսցի խորին ձերու-  
թէնն:

18. 173 թ. Մարկոսի վերջում, բոլոր-  
որով:

Բարէխաւաւութբ. սր. ածածնին և  
սր. կինսատու խաչին թողէ զանցանս  
պարոն Ուլուխաթունին, զնիրելին և զան-  
նիրելին, զկամոյին և զանկամային:

Զի յոյժ հնացեալ էր սր. աւետարանս  
և ետ նորողել զսա ի ժամանակիս, որ է  
Մատիսան եկն Թավըէզ: թվ. Զի՞՞զ. : և որ  
հանդիպիք, յիշէք զպրն. Ուլուխաթուն և  
զիւր ծնաւզսն. և ած. ողորմի ա(սա)ցէք  
նոց.

Եւ զիս զչեմ արժան ծառայս զԾիրաւաքս  
յաղաւթս յիշեցէք և իշողքդ արժանի լի-  
ցիք արքայութէնն այ. :

Յիշեցէք և զծահրիսրն և զամ. արեան  
մերձաւորն իւր:

19. 112 ա. Ես Շնահաւորիկս միաբա-  
նեցայ սր. ուխտիս Մեծ կողմանց աթո-  
ռոյս, յաղաւթս յիշեցէք եւ յետ կատար-  
ման իմոյ հանդիստ իմ աստ լիցի:

ԳԱՐԵԴԻՆ ԱՐՔԵՊՈ. ՅԱՎՈՒՓԵԱՆ  
(Շարունակելի)

## ՊԱՏՄԱԿԱՆ

ԽԻՐՈԷԴ ՖԱԶԻԼԻ (Pella) ՎԱՆՔԻ,  
ԵԿԵԼԵՑԻՆ ԵՒ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ  
ՆՈՐԱԳԻՒՏ ԱՒԵՐԱԿԱՆԵՐԸ  
(Ա. ԿԱՄ Զ. ԴԱՎԻ)

ԵՐՈՎԱՆՊԵՄԻ ԱՄԵՐԻԿԱՆ ՀՆԱԽՈՍԱԿԱՆ  
ԱՊԱՐՔԵՐԱԹԵՐՄԸ Palestine Exploration Fund  
անուամբ, զաթուուն և վեց տարիներէ ի  
վեր հմատալից յօդուածներով կը հրատա-  
րակէ Պաղեստինի պեղումներու հետեւան-  
քով յառաջ եկած բոլոր հնութիւնները՝  
այնպէս որ Պաղեստինի պատմութիւնը միծ  
զարգացում ունեցած է նոյն ժամանա-  
կոմիջոցի մէջ կատարուած հետազօտու-  
թեանց և հրատարակութեանց չնորհիւ.  
Պաղեստինի նոր պատմութիւնը շատ բան  
կը պարտի նոյն պարբերաթերթին. մենք  
ալ չատ օգտուած ենք անոր թանկազին  
հրատարակութիւններէն և կը փափաքինք  
որ մեր Սիոնի ընթերցողներն ալ անմտան  
չմնան նոյնին գեղեցիկ և օգտակար հրա-  
տարակութիւններէն. ուստի պարբերաբար  
պիտի հրատարակենք հնախոսական կարե-  
ւոր յօդուածներ, որոնցմէ մին է ներկայ  
յօդուածը (1934 Յունուար), որ կը խօսի  
Խիրոկի Ֆահիմի (Pella) Ե. կամ Զ. զարուն  
շինուած զանքի մը, եկեղեցիի մը և գե-  
րեզմանատան մը և այլ չէնքերու նորա-  
զիւտ աւերակներու մասին, որուն հեղի-  
նակն է John Richmond, յօդուածս ունի հե-  
տեւեալ զլսաւոր բաժանումները. Ա. — Տե-  
ղագրութիւնը, Բ. — Վաշի ծիրմ - կլ - Մողի  
հիւսիսային կողմի այրերը, Գ. — Գերեզմա-  
նատունը, Դ. — Շինիւրը, Ե. — Խեցեկին:

Ա. ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ալիրպէզ Ֆահիմ, որ իր անունին տակ  
կը բովանդակէ հին վայրին ամբողջութիւ-  
նը՝ թէև անցուկ կերպով միայն զործադը-  
րելի այն բարձրութեան՝ որուն վրայ կա-  
ռուցուած է արդի զիւզը. ան հաստատ-  
ուած է համանման Յորդանանի մօտ Պէտ-  
անի զիրքին: ձէպէլ Աճլունի զլիսաւոր